

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 95-ամյակին և սոցիալական ծառայությունների ստեղծման 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը

06.12.2013



Ս/թ դեկտեմբերի 5-ին, ժամը 19:00-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի մասնակցությամբ տեղի է ունեցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 95-ամյակին և սոցիալական ծառայությունների ստեղծման 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառում: Հանդիսավոր միջոցառմանը մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, ինչպես նաև Վայոց ձորի մարզի սոցիալական ոլորտի մի շարք աշխատակիցներ:

Նշենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման Վայքի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետ Արմեն Մարգարյանն արժանացել է ՀՀ վարչապետի շնորհակալագրին: